5-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

3-միավորանոց առաջադրանքներ

1. Ըստ ժողովրդական ասացվածքի՝ պտուղն ո՞ւր չի ընկնի:

Ա)ծառի մոտ
Բ)ծառից հեռու
Գ)գետը
Դ)հարևանի այգին

2. Պատասխանի տարբերակներից ո՞րը չի ենթարկվում ընդհանուր օրինաչափությանը:

Ա) հացենի
Բ) զկեռենի
Գ) հնամենի
Դ) պիստակենի

3. Մարգագետնում զրուցում էին չորս ընկեր կենդանիներ: Նրանցից մեկն ուրախ վրնջաց, մյուսը զվարթ կչկչաց, երրորդը տխուր մկկաց: Եվ միայն չորրորդը ոչինչ չասաց: Ո՞ր կենդանին ոչինչ չասաց:

Ա)ոչխարը
Բ) հավը
Գ) այծը
Դ) ձին

4. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) հաղթել,
Բ) մաղթել,
Գ) կանթեղ
Դ) անթել

5. Ձմեռ պապիկի թելադրած բառերից քանի՞սը Ձնեմարդուկը սխալ գրեց:

Հարցուփորձ, ուրց, պախուրձ, բարձրունք, պանծալի, խոճկոր, թուղս, թաթերական

Ա) 2
Բ) 3
Գ) 4
Դ) 5

Վերարտադրումը միայն "Քոնթենպորարի"-ի թույլտվությամբ

6. Տարբերակների բառազույգերից որո՞ւմ բառերը հականիշներ չեն (հակառակ իմաստներ չունեն):

Ա)խոշոր - վիթխարի
Բ) դժվար - հեշտ
Գ) դատարկ - լիքը
Դ) ոսոխ - բարեկամ

7. Պատասխանի տարբերակներից ո՞րը կամբողջացնի ասացվածքը:

<< Աշխատանքը սև է, հացը՝ _____: >>

Ա) կարևոր
Բ) սպիտակ
Գ) կենսատու
Դ) համեղ

8. **Մայրը. «_____ը որտե՞ղ է»:**
Հայրը. «Մեր որդո՞ւն ես փնտրում, թե՞ Միհրի տուն տանելու տոպրակը»:
Ի՞նչ է նրանց որդու անունը:

Ա) Միհր
Բ) Հայկ
Գ) Լևոն
Դ) Նվեր

9.Պատասխանի տարբերակների բառերից ո՞րն է «ավելորդ»:

Ա) դասագիրք
Բ) դաստակ
Գ) դասամիջոց
Դ) դասընթաց

10. Ո՞ր բառը կարող է հանդես գալ որպես ***անկյուն, աչք, լեզու, միտք*** բառերի հատկանիշ:

Ա)զույգ
Բ)ճարտար
Գ)սուր
Դ)հետին

Վերարտադրումը միայն "Քոնթեստս ԼՄԲ"-ի թույլտվությամբ

4-միավորանոց առաջադրանքներ

11. Ֆրանսիացի Ֆրանկը սովորում է հայերեն: Նա կարծում է, որ ածական կարող է ստանալ՝ գոյականից հետո գրելով ***-ային*** վերջածանցը: Ո՞ր գոյականից այդ սկզբունքով նա իրոք կստանա ածական:

Ա) գիրք
Բ) հեծանիվ
Գ) համակարգիչ
Դ) հանք

12. Պատասխանի տարբերակներից ո՞րն ունի և՛ *մարմնի մաս,* և՛ *ղեկավար*, և՛ *վեպի մաս* նշանակությունները:

Ա)կառավարիչ
Բ)գլուխ
Գ)արմունկ
Դ)հատոր

13. Բերված նախադասության մեջ քանի՞ ուղղագրական սխալ կա:

Արեվադարցային թանձրախիտ անտառներից կենթանաբանական այգի բերված այռուծն ընդիմանում էր անորինակ պայմաններին և տվալուկ ու թաղծոտ աչքերը հառել էր լուսընկա երկնքում առկայծող բևեռային աստղին՝ կարծես փնտրելով իր բնորան տանող հարթագողի ճանապարը:

Ա) 15
Բ) 14
Գ) 13
Դ) 10

14. ***Նախադասություն, ձայնարկություն, բառակապակցություն, պարբերություն*** բառերից ո՞րն է, ամենայն հավանականությամբ, սխալմամբ հայտնվել այս շարքում:

Ա) նախադասություն
Բ) ձայնարկություն
Գ) բառակապակցություն
Դ) պարբերություն

Վերոնշյալ հարցերը հրապարակվում միայն "Բրգատանավ"-ի թույլտվությամբ

15. Ի՞նչ է գաղտնագրվել տառաշարքում:

Ճաայբղատինիկենըթ կենրեայբկենինի գիմուհինու ունուինի:

Ա) Ճաղկած վարդը կարմիր գույն ունի:
Բ) Ճաղիկը կարմիր գույն ունի:
Գ) Ճաղիկը կրակի գույն ունի:
Դ) Ճաղկած դաշտը կարմրին է տալիս:

16. Ո՞ր բառից են «քամվել» - ***երկ, ներկ, կար, ար, արար*** - բառերը:

Ա) ներարկել
Բ) նկարակալ
Գ) ներկարար
Դ) նկարչական

17. Կարենն ուներ չորս նույնանման քարտ, որոնց վրա գրված էր՝ ***կես_____***: Քարտերի վրա նա ավելացրեց ***օր, ցերեկ, երեկո, գիշեր*** բառերը: Հայերեն քանի՞ բառ ստացավ նա:

Ա) 1
Բ) 2
Գ) 3
Դ) 4

18. Այդ տառը ավելացնելով **ԱՂ** բառի սկզբից՝ կստանանք նոր բառ: Նույն տառը ավելացնելով **ԱՂ** բառի վերջից՝ կստանանք ուրիշ նոր բառ: Ո՞ր տառն է դա:

Ա)թ
Բ)ի
Գ)մ
Դ)տ

19. Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա)գյուղապետ
Բ)ճյուղապատ
Գ)գյուղական
Դ)երկնակամար

Տարապարակումը միայն "Քոնթեյնոս Լաբ"-ի թույլտվությամբ

20. Ուսուցիչը հանձնարարեց վերծանել հեքիաթների վերնագրերը և ասել հեղինակի անունը: Արամը ճիշտ կատարեց առաջադրանքը: Փորձի՛ր նաև դու:

«տրծի», «լիուկը», «մաճնորդփերը», «ասուստանը»

Ա) Գրիմ եղբայրներ
Բ) Ղազարոս Աղայան
Գ) Հովհաննես Թումանյան
Դ) Ալեքսանդր Պուշկին

5 միավորանոց առաջադրանքներ

21. Արեգն արտագրում էր գրադարակում շարված հանրագիտարանի հատորների կռնակներին գրված բառերը: Զույգերից մեկում նա պատահաբար շփոթեց բառերի տեղերը: Ո՞ր զույգն էր դա:

Ա) ԱԱԼՏՈ - ԱԼԱԲԱՄԱ
Բ) ԳՈՐՏԵՐ - ԳԱԳԻԿ
Գ) ՄԿՈՒՆԴ - ՄՐՐԻԿ
Դ) ՉԻՉԽԱՆ - ՊԱՏԱՐԱԳ

22. Երբ էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս 17:00, կարող ենք ասել, որ ժամը հինգն է: Իսկ ի՞նչ պետք է ցույց տա ժամացույցը, որպեսզի «ժամը քանի՞սն է» հարցին կարողանանք պատասխանել առանց որևէ թվի անուն տալու:

Ա) 10:00
Բ) 12:00
Գ) 14:00
Դ) 15:00

23. Շարքում բառերը դասավորված են այբբենական հաջորդականությամբ և կապված են որոշակի օրինաչափությամբ: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞րը կլինի հաջորդ բառը:

<< Բուրգ, թեժ, հունձ, նախշ, ... >>

Ա) սակավ
Բ) չորեքշաբթի
Գ) վստահ
Դ) պողպատ

Վերոհիշյալ հոդվածը միայն "Բոգոսլովսկոյ Լայբ"-ի թույլտվությամբ

24. Չինական գրում նշանների եռապատկումը սկզբնապես օգտագործվել է նոր իմաստով բառեր արտահայտելու համար: Օրինակ՝ 石 քար - 磊 քարակույտ, 隹 թռչուն - 雥 թռչունների երամ և այլն: Գտիր 森 հիերոգլիֆի թարգմանությունը, եթե հայտնի է, որ 木-ը ծառ է:

Ա) ծառեր
Բ) սաղարթ
Գ)անտառ
Դ)գերան

25. Հինգ հարազատ եղբայրները շարվել են կողք կողքի: Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րն է թաքցրել մեղվիկը:

բ, g, մ, ***, ճ***

Ա) մ
Բ) գ
Գ) կ
Դ) ի

26. Պատասխանի տարբերակներից ո՞րը կանանանք, եթե << ***հեղեղատ, ուսանող, խորագիր >>*** բառերից յուրաքանչյուրից վերցնենք մեկական վանկ:

Ա) հեռագիր
Բ) խոսափող
Գ) ուղղաթիռ
Դ) ուղեգիր

27. << ***Սեղան, եղջյուր, օդափոխիչ, տարեգլուխ*** >> բառերն անվանենք «տարբերատառիկներ»: Բերված բառերից ո՞րը «տարբերատառիկ» չէ:

Ա) ճամպրուկ
Բ) անջրպետ
Գ) տարբերատառիկ
Դ) բոլորը տարբերատառիկներ են

28. Աղյուսակի մի անկյունից սկսելով և որոշակի օրինաչափությամբ շարժվելով՝ կկարդաս մի «քաղցր» բառ: Ո՞ր տառը պետք է տեղադրել դատարկ վանդակում:

Ա) բ
Բ) ի
Գ) ղ
Դ) ու

ա	*	ա	մ
ր	հ	ե	մ

Վերարտադրումը միայն "Քոնդեսատոս Լաբ"-ի թույլտվությամբ

29. **<< Երեխա, ծերունի, կին, պապիկ, մարդ, զավակ, որդի, աղջիկ >>** բառերից ո՞ր երկուսն են իրենց որոշակի հատկությամբ տարբերվում մյուս բառերից: Պատասխանելուց առաջ մտածի՛ր մեկից ավելի անգամ:

Ա) երեխա և աղջիկ
Բ) ծերունի և որդի
Գ) կին և մարդ
Դ) պապիկ և զավակ

30. Միերն ունի հայոց այբուբենի տառերի պատկերներով երեք խորանարդիկ: Նրանցից մեկին պատկերված են **Ա, Ծ, Մ, Գ, Ը, Վ,** մյուսին՝ **Ճ, Ո, Ն, Զ, Է, Խ,** իսկ երրորդին՝ **Ե, Փ, Ի, Ֆ, Կ, ՈՒ** տառերը: Այդ խորանարդիկները կողք կողքի դնելով՝ ո՞ր բառը չի կարողանա կազմել Միերը:

Ա) մեխ
Բ) ճիչ
Գ) կով
Դ) երեքն էլ կկարողանա կազմել

Վերահրապարակումը միայն "Քոնթեստս Լաբ"-ի թույլտվությամբ